



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1999

ՓՈԶԵ ՎԵՐԵ

# ԹՐՈՎԱԹՈՐԵ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾ



ՀՐԱՄԱՆ. ՅԱԼՈՐ Աղամալեան

Ltn

1969

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒԽ

Խ. Վ. Բ. Ա. Գ. Պ. Պ. Ա. Տ. Ե. Վ. Ե.

Ան համար ձևացնելու, թիւ 14.

1892

# ԹՐՈՎԱԹՈՐՔ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՖՐԱՆՍԵՐԷՆՔ

ՎԱՀԱՆ Յ. ՔԻՒԲԵԿԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ

ԶՐԱՎԱՆԻԱՆ ՅԱԼԿՈՔ Աղամազեան

ՀԱՐՎԵՆԱԿ ԶԵՐԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ



ՏՊԱԳՐ. ԵՎ ՎԻՄԱԳՐ. Գ. ՊԱԴԱՍՏԵԱՆ

Սուլրամ համամ ճամսեսի, թիւ 14.

1891

Զ Օ Ն

Ն Ա Ի Ւ Ր Ա Կ Ա Ն Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի

Վ Ա Ղ Ա Մ Ե Ւ Ո Ր Դ Ի Ո Յ Ս , Տ Ա Խ Ա Մ Ե Ա Ց

Ե Ր Ո Ւ Ա Ն Դ Ա Ց Վ . Ք Ի Ւ Բ Հ Ձ Ե Ա Ն Ի

Ց Ր Ա Կ Ա Լ Ո Ց Է Կ Ն Գ Ա Ց

Ի 7 Ա Պ Ր Ի Լ 1884

Ե Կ

Հ Ա Ց Կ Ա Ց Ց Ա Ց Կ Ա Ց Մ Ա Ն Կ Ի Ւ

Հ Ա Ց Ր Ա Վ Ա Տ Ա Կ Ա Ր



23. 1946

41969-60

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Սոյն չնաշխարհիկ ողբերգուքիւնը հոչակաւո՞ն Վէկտի անմահացուցած է սբանչելի եղանակներովն, այնպէս որ աշխարհիս ամէն ազգաց բատրնեներնուն մէջ ալ տարի չըլլար որ հինգ վեց անգամ չի ներկայացունեն անխսիր. և ամէն անգամ ալ զայն ի լուր վայելողները կարծես նոր խաղ մը կը տեսնեն և նոր նոր եղանակներ կը լսեն միւս զմայելով. ուստի սոյն օքէրան արձակ բարգմանելով նուիրեցինք Հայ բատրասիրաց, ժաշայոյս լինելով որ սիրալիր ընդունելուքիւն կը գտնէ :

ԹԱՐԳՄԱՆԻՁՆ

# ԹՐՈՎԱԹՈՐԵ

## ԱՐԱՐԻԱԾ ԱՌԱՋԻՆ

### ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ

Արակենայի մէջ .— Սարակոսա բաղաքին Ալիա-  
ֆերա պալատին գաւիրը , կողմնակի դռւ մը  
որ Լունա կոմսին բնակայարկը կը տանի :

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Ֆերնանս եւ կոմսին բազմարիւ արքանեալ-  
ները դրան մօսիկը պառկած . — Խորը կը ձեւեն  
յանի մը զինակիրներ :

Ֆերնանս . — Արթնցէ՛ք , սթափեցէ՛ք , կար-  
մրերփեան արշալոյսը հիմա կը ծագի , աւասիկ  
մեր տէրը , կոմս Լունան , որ իւր չքնաղուհ-  
ւոյն պատշգամին տակ կը հառաչէ տրտմա-  
թախիծ զառանցանաց մատնուած :

Արքանեալք . — Նախանձոտ սէր մը կը տան-  
ցէ , կը մաշէ զինքն հանապազ :

Ֆերնանս . — Այն գուսանը որ մութն ի լու-

## ԱՆՁԻՆՔ

ՄԱՆՐԻԿՕ , (Գուսանը , ով բրուշիր) Ազուչենայի որդեգիր եւ  
եղբայր կոմսին .  
ԿՈՄԱ ԼՈՒՆԱ ,  
ՖԷՐՆԱԾ ,  
ՐՈՒԻԶ ,  
ԼՀՈՒՈՐԱ , Կոմսին նարսնացուն .  
ԱԶՈՒՉԵՆԱ , Գնչուհի պառաւ .  
ԻՆԷԶ , Լէոնորայի մտերմուհին .  
ԳՆՉՈՒ ՄԸ ,  
ՊԱՏԳԱՄԱԲԵՐ ՄԸ ,  
ԲԱՆՏԱՐԱՅ ՄԸ ,  
Լէոնորայի բներուհին , Լունա կոմսին արքանեակներն ,  
զինակիրներ , Մանրիկօյի կուսակիցներն , զօրեր ,  
գնչուներ ու զնչուհիներ :

Եղելուքիւնը մասամբ տեղի կ'ունենայ Արակենի մէջ  
եւ մասամբ Պիսխայիայի մէջ , ժԵ . դարուն սկիզբները :

սոյն քաղցրանուագ կ'երգէ , այդ հակատրփողն  
եւս առաւել կը խոռվէ զայն :

Արբանեակ . — Քուներնիս ի բաց վանելու  
դիտմամբ , պատմէ տեսնենք կոմսին եղօրը  
վրայ եղած պատմութիւնը :

Ֆէրնան . — Ամենայն յօժարութեամբ պատ-  
մեմ , բարեկամք , մօտեցէք ինձ :

Զինակիրք . — Ի՞նչ պատմութիւն է այդ :  
(Ֆէրնանի շուրջը կը բոլորին ամենին ալ) :

Արբանեակ . — Լոռութիւն , ականջ գրէք :

Ֆէրնան . — Իմ տիրոջս հայրը երկու որդի  
ունէր , իւր կենաց միակ յոյսն էին . օր մը կըրտ-  
սեր մանկան որբանի քովիկը մրափելով կ'երա-  
գէր դայեակը , այն ինչ արշալոյսը ծագելուն  
աչքերը կը բանայ յանկարծ և ի՞նչ կը տեսնէ :

Պարն . — Զո՞վ կը տեսնէ . . . ո՞վ երկինք :

Ֆէրնան . — Զարագուշակ աչքով պառաւ  
վհուկ մը , օր արիւնուուշտ ակնարկն այն խեղճ  
զուարթնոյն վրայ շեշտելով մոլեգնաբար կը  
դիտէր . Դայեակը սարսափահար ճիշ և աղմուկ  
փրցուց , և ահա իսկոյն ամեն դիէն պահա-  
պաններ և սպասաւորներ վրան թափելով , այդ  
զգուելի վհուկը գանակոծեալ պալատէն գուրս  
ըրին :

Պարն . — Այդ կախարդ մեգերային , այդ  
մահառիթ սատանին դէմ , արդար բարկու-  
թիւն :

Ֆէրնան . — Իսկ պառաւ գնչուկին կ'ըսէր  
թէ , մանուկին ապագան նայելու համար եկեր

էր , և ահա նոյնժաման տենդ մը , սասակիկ  
խիթ մը կը պատէ . գունաթափ , ուժաթափ ,  
ցաւերով ընկճեալ այն խեղճուկ էակը . Դժո-  
խոց զոհուելով կախարդուե՛ր էր . Սակայն օր  
մը այդ գնչուկին բոնուելով խարոյկի վրայ  
չարատանջ այրուեցաւ : Բայց նա կանխաւ իւր  
աղջկանը կտակեր էր իւր ոճիրն ու վրիժառու-  
թիւնն . . . վրիժառութիւն ահուելի . . . օր չատ  
չուտով կատարուեցաւ : Այդ կախարդին ալ-  
ջիկը օր մը կոմին որդին կը յափշտակէ , և  
իւր մօրը մահացուցած տեղերնին արեւածա-  
գին ատեն , ածիւններուն մէջ քանի մը մն-  
ձինք ճամբայներնուն վրայ մանուկի մը մնա-  
ցորդներ կը տեսնեն :

Պարն . — Ոզորմելի՞ զոհ , այլ այդ քսամնելի  
ոճիրը պատիժը կ'արդարացունէ . . . իսկ հայրը :

Ֆէրնան . — Այս դառն կսկիծէն ընկճեալ ,  
սակայն և այնպէս գաղտնածին բնազդ մը ու-  
նէր ներսուդին , վկայող թէ այդ որդին ողջ ա-  
ռողջ գուցէ աղատա՛ծ էր . . .

Պարն . — Ոճրագործին վրայ խօսք մը չե-  
ղա՞ւ բնաւ :

Ֆէրնան . — Բնաւ լուր մը չկայ այդ վատ  
անողորմին վրայ , ա'հ , եթէ գտնայի՛ զինքը . . .

Պարն . — Պիտի կրնայի՞ք զայն ճանչնալ :

Ֆէրնան . — Յոյս մըն է որ սրտիս մէջ  
կ'զգամ թէ կը ծնանի , այո՞ . . . թերեւս :

Պարն . — Ոճրին հեղինակ իւր չարածնունդ  
մօրը պէս , դժոխքը թող զայն ալ լափէ :

Ֆէրնանս . — Ո՞վ , իւր մա՞յրը կ'ըսէք . . .  
Նորա հոգին հոս օդ երուն մէջ կը յածի , իւր  
ահոելի ուրուականը կը պղծէ այս աշխարհն ,  
և ձեւը փոխելով խոր մթութեան մէջ յաճախ  
անոր ասոր կը տեսնուի :

Պարն . — Ճշմարիտ է ա'յդ , այո' :

Զինակիրք . — Մութը կոխելուն պէս , սգա-  
տեսիլ որմերուն մէջ իբրեւ խաւարի թռչուն  
նորա ձայնը կը լսուի ի մթան :

Արքանեակներն . — Բուին ճիչը իւր հանդի-  
սական երգն է , նորա հրատոչոր թռիչը ծա-  
ղիկները կը թառամէ :

Ֆէրնանս . — Վայ եկեր է անցորդին , եթէ  
Աստուած չպահէ զայն , որու որ նա հանդիպի ,  
որու որ նայի , մահ է նորա բաժինը . . .

Պարն . — Մա՛հն է բաժինը :

Ֆէրնանս . — Երկչոտ անցորդը այդ մահա-  
գոյժ թռչունին իւր բոյնէն ելլելը տեսնելուն  
կը կապկառի և եղած տեղն ընկնելով առժա-  
մայն կը մեռնի : Եւ ահա այն ատեն կէս գի-  
շեր կը զարնէ . . .

(Կես-զիշերի զարնուիլլը կը լսուի) :

Ֆէրնանս և Պարն . — Ա՛հ , շանթը թռղ ո-  
րոտայ . . . անէ՛ծք ու վայ Սատանի գործա-  
կցին . . .

(Թմբուկի ձայն , Զինակիրք գէպի խորը կը  
գիմեն , իսկ արբանեակներն դրան կողմը կը  
քաշուին :



### ՏԵՍԻԼ Բ.

Պաշտին պարտէզը . — Աշ կողմը սպիտակ  
մարմարէ սանդուխ մը որ բնակայակերը կը  
տանի : Գիշեր է : Լուսինը ամպերու տակ քաղ-  
ուած :

Լէ՛՛՛ՆՈՐԱ. ԵՒ ԻՆԷԶ

Ինէզ . — Որո՞ւ կը սպասես , ժամանակը  
կ'անցնի , փութանք , կոմունին ձեզ կը կան-  
չէ , ժամանակն է :

Լէ՛՛ՆՈՐԱ (մեկուսի) . — Ո՛ երագդ իմ հոգ-  
ւոյս , երա՛զդ հեշտաւէտ , չպի՞տի գաս . . .

Ինէզ . — Ա՛հ , ի՞նչ փորձանք կը սպառնայ ,  
Տիկին , մահառի՛թ հուր . . . անիծեալ լինի այն  
օրն , յորում ծնաւ այդպիսի սէ՛ր :

Լէ՛՛ՆՈՐԱ . — Կրկէսին մէջ , սեւափայլ պող-  
պատեայ զրահներով նա գոռոզ ինձ երեւաց ,  
և իւր ախոյեաններուն պարտութիւնը փու-  
թացնելով իւր նժոյգը վարեց խոտերուն միջեւ  
եկաւ աչքիս առջին կայնեցաւ և իմ ձեռօք  
յաղթական պսակուեցաւ : Ա՛հ , և ահա այդ  
մեծահանգէս օրէն , մահն ի սիրոս է . . . նորա  
քաղցրիկ պատկերն իբրեւ երկնային ճառա-  
գայթ ի գուր մնայ յիս : Մտի՛կ ըրէք . . .

Ինէզ . — Շարունակեցէք :

Լէ՛՛ՆՈՐԱ . — Մահառի՛թ վիճակ : Անդորրա-  
ւէտ և խաղաղիկ գիշեր մ'էր որ կը պատէր

լայնածաւալ հովիտն անամպ երկնից վրայ ,  
լուսինն ի հեռուստ տակաւին հազիւ կ'ելլէր ...  
յանկարծ զեփիւռին թեւոց վրայ արձագանգն՝  
սիրահծծիւն քնարի մը ողբերն՝ ինձ կը պատ-  
մէր սիրերդ մը երիտասարդ գուսանին : Երկ-  
նային արբշութիւն էր ինձ այդ ... Այդ գո-  
րովալից երգ տիրութեամբ անունն կուտար ...  
անունս . . . անդադար . . . այդ գերագոյն ար-  
տասանութեան , վազեցի . . . ով խնդութեանս  
գերազանց . գիւցազն էր նա զոր կը սիրէի ,  
զգացմունքս կը զմային , աչքերս կը տեսնեն  
թէ երկի՞նքն է որ կը բացուի ...

Ինէզ . — Զեզի համար , Տիկի՞ն , ո՞հ , ի՞նչ  
մեծ անձկութիւն , այս , վախէս կը դողահա-  
րիմ . . .

Լեռնորա . — Բնդվայրապա՛ր :

Ինէզ . — Ո՞հ , չարագուշակ նախազդ մը  
վախնամ մեզի տեւական փոթորիկ մը կը գու-  
ժէ , ուստի բարեկամութեանս խնդիրքին տեղի  
տուէք , մոռցէք ամէն այդ բաները :

Լեռնորա . — Այլ եւս կարո՞ղ եմ միթէ :

Ինէզ . — Շնորհ ըրէք :

Լեռնորա . — Մոռնամ զինքը , զոր սի՞րտս  
կը պաշտէ . . . Զէ՞ք ուրեմն մեղքնար զիս : Այն  
բուռն սէրը , գերագոյն և գուրգուրական սէրն  
այնպիսի շեշտեր ունի զոր դու չես հասկնար  
. . . ձայնս կը գոչէ զայն . . . ի հեռուստ կար-  
ծեմ թէ զայն կը լսեմ . . . Երկնայի՞ն յափշտա-  
կութիւն , սիրտս զուարթանայ : Ամբողջ հոգիս

անոր կուտայի , մինչ ի վերջին շունչս պիտի  
սիրէի զայն . Եթէ յաստիս չկարենամ անորն  
ըլլալ , գէթ նորա հետեւելով երկնից մէջ պի-  
տի երջանկանամ :

Ինէզ . — Աստուած փրկէ մեղ ակներեւ փոր-  
ձանքէ , միթէ այն ատեն ես կընա՞մ ողջ մնալ ,  
ես ալ քեզի պէս կը մեռնիմ :

(Պաշտէն վեր կ'ելլեն) :

### ՏԵՍԻԼ Գ.

#### ԿՈՄՄ

Կոմմ . — Գիշերը խալաղլ է : Հեռուն ամեն  
բան լրութեան մէջ կը նիրէէ , մեր վսեմա-  
փայլ կոմուհւոյն տան մէջ , գիտեն իմ հսկո-  
ղութիւնս . . . Ո՞հ , Լէոնորա՛ , քու չքնաղ աչ-  
քերդ պայծառ արեւու պէս կը փայլին իմ  
ստուերիս մէջ , մինչ ամեն ինչ խաւար է : Ա՞հ ,  
մեծդ Աստուած . . . ո՞րպիսի սաստիկ հուր մը  
թափանձեց իմ հոգիս . . . Ո՛ Լէոնորա , այս ,  
պիտի գաս դու , անգութ , և ակամայ ինձ  
պիտի ունկնդրես ընդհուպ : (Հեռուն ինարի  
ձայն կը լսուի) : Ի՞նչ կը լսեմ . . . Գուսանը չէ՞ . . .

Գուսանը (դրսէն)

Ա.

Երկրիս վրայ տարագիր  
ես կը ծիւրիմ մենակեաց

Դոյզն ինչ լե՛ր գու ուշադիր  
երգող գուսանին տիրած :

Կոմը . — Ո՛վ կատաղութեանս , կը նա-  
խանձի՞մ :

Գուսանը

Ո՛հ , թող սէրն հաւատարիմ ,  
Սզդէ սրտիդ , շքնաղդ իմ  
Եւ ճանչնաս ձայնն սիրածարծ  
Անցնող գուսանին տըմրած :

### ՏԵՍԻԼ Թ.

ԿՈՄՍԸ , ԼԵՈՆՈՐԱ

Կոմը . — Անշուշտ ինքն է . . . այո՛ , ինքն է . . .  
Լեոնորա . — Կոմը Գուսանը կը կարծէ ո-  
րուն ձայնը կը լսէ որ կ'երգէ :

Լեոնորա

Ի՞նքն է արդեօք զոր կը տեսնեմ . . .  
Ո՞րչափ ժամն երկար տեւէ  
Երբ քեզի կը սպասեմ .  
Հոգիս կը տրոփէ ,  
Անհամբեր քեզ կը կոչէ .  
Բայց վերջապէս որ եկար ,  
Աւ չեմ վախնար և չեմ լսր .  
Երջանկութիւն կայ միայն ինծի համար :

Գուսանը . — (Հեռուին) Ապաշնո՞րհ գու :  
Լեոնորա . — (Ապշեղով) ի՞նչ կը լսեմ . . .

(Լուսինը անպերու միջեւին կը տեսնուի եւ  
միւս անձի մը լոյս կուտայ որ յանկարծ կ'ե-  
րեւայ տեսարանին վրայ . — Գուսանն է այն) :

### ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ , ԳՈՒՍԱՆԸ

Լեոնորա (Գուսանը մանցնալով) . — Ո՛հ ,  
ո՞րպիսի սխալմունք . . . ի՞նչ արտասովոր գաղտ-  
նիք է այս , ես քեզ առանձին կարծեցի հոս ,  
կարծեցի թէ ձայնդ է զոր կը լսեմ , ուստի  
եկայ քեզի սպասեցի : Ո՛հ , քեզ միայն կը սի-  
րեմ , հաւատա՛ երդմանս :

Կոմը . — Ուխտագոռւժ :

Գուսանը (Լեոնորայի յով զաղով) . — Ո՛ քե-  
րազանց բարի :

Կոմը . — Զարհուրէ՛ բարկութենէս :  
Լեոնորա (Գուսանին) . — Կը սիրեմ քեզ :  
Կոմը . — Բացէք երեսնիդ որ ամենն աւ  
քեզ ճանչնան :

Լեոնորա (մեկուսի) . — Աւա՛զ :

Կոմը . — Անունդ ըսէ , անունդ ըսէ :

Լեոնորա . — Գործերնիս լմացա՛ւ :

Գուսան . — Անո՞նս , Մանրիկօ կը կոչուիմ :

Կոմաք. — Ա՞հ, գողա՛ ապիրատ, ի՞նչ յիշարութիւն, նշանաւոր յանդգնութիւն, աքսորի գատապարտեալ մը. մեր ոսովսին, Ուրկէլի համախոցն է որ հոս ոտք կը կոլսէ . . . քեզ մահը կը սպասէ . . . տե՛ս :

Գուսանը . — Մի՛ տարակուսիր , կանչէ դա-  
հիձներդ , կացինն ու վատութիւնը՝ քու ա-  
խոյեաններո՛ւդ դէմ:

Կոմար . — Այդ նորանոր նախատանացդ համար , կեանքդ կ'ուզեմ և պիտի առնեմ . . .

Լենինրան . — Կոմս . . .

Կոմիլ . — Վա՛տ տիրադաւ , սոսկա՛ բար-  
կութենէս :

Լէննորա . — Սիրտս կը տրովիէ արհաւելիք-  
քէս . . .

Կոմսը . — Օ՞ն ի մարտ . . .

Գուսան · — Երթա՛նք :

Լեննորա . — Ո՞վ երկինք , արիւնս կը սառի ,  
չնո՞րհք :

Կոմս . — Ո՞չ , Հոգիս կաշկանդուած է մո-  
լեգնութենէ , նախանձէ և բուռն խելայեղու-  
թենէ , քու վիճակիդ կանխագուշակուած է .  
Երբ բերնէդ հանեցիր անոր թէ , « Կը սիրեմ  
քեզ » . ա՛հ , այդ խոստովանութիւն , նորա  
նզուքն , նորա դատավճիռն էր մահու :

Լենորա (Գուսանին). — Ա՛հ, արհամարհէ  
այդ յանդուգնը, այդ մենամարտը կը յուսա-  
հատէ զիս. ո՛հ, չնո՞րհք, լսէ՛ աղաչանքնե-  
րուս, տեղի տուր իմ սիրոցս ձայնին: (Կումսին)

Տե՛ս արտասուբքս , տե՛ս հեծութիւններս . բայց  
եթէ նա մեռնի , այլ եւս յոյս մի՛ ունենար ,  
վախցի՛ր վրիժառութենէս , այո՛ . վախցի՛ր ա-  
տելութենէս և անդա՛րձ կերպավ :

Գուսաննը (Լեռնորայի) . — Հոգիս վստահ է  
սրոյս վրայ եւ աներկիւղ կը խիզախեմ իւր  
բարկութեան . ուստի այլ եւս մի' լար , մի' ա-  
ղաչեր , ես փրկուա'ծ եմ քու սիրովդ : (Կոմսինն)  
Մարտնչելու ժամը կ'անցնի . այս' , վրիժու  
ժամն է արդ , ո՛հ , նենգաւոր դու , վախցիր  
անվեհերութենէս , քու վերջին օրդ ծագեցաւ :

Կոմսը (ընկերանալյով) .— Դաղա վրիժառութենէս, վախցի՛ր քաջութենէս. (առանձին) վատ տիրանենգ դու, այո՛, պիտի սպանեմ քեզ, զարհուրէ նախանձէս, քու պիղծ անդքնութիւն քու վիճակդ պէտք է զուցանէր քեզ, դողա՛, դողա՛, ըստ որում պիտի մեռնիս :

(Երկու հակառակորդ սուրբեմ բաշխութիւնը  
կը մետքին . Լինենք կը շահու զանութիւնը  
յել . ապա նուազեալ կ'իյնայ) :

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

### ԳՆՉՈՒՅՑԻՆ

Պիսգայի մեջ. — Զառիվայր լերան վրայ բաց  
երկնիքի տակ մեծ կրակ մը կը վառի տեսարանին  
մէջտեղը, արշալոյսի մօս :

### ՏԵՄԻԼ ԱՌԱՋԻՆ

Ազուցենա կրակին բով նստած, Մանրիկ Գու-  
սանը նորա մու նստած է ընկողմանած իւր  
վերարկուին մեջ պղուած. խումբ մը զնչու-  
թեր ցիր ու ցան,

Գնչութերն. — Արեւը կը ծագի ահա . . . ըգ-  
մայլեցէք սա տեսարանին վրայ, գիշերուան  
վերարկուն կը վերնայ երկրիս վրայէն, ինչպէս  
այրին կը թողու իւր սգոյ հանդերձներն,  
նոյնպէս ալ բնութիւնը սգազգեաց գաղտնիքը  
կը թոթուէ իւր վրայէն. օ՞ն, փութացէք,  
ի գո՞րծ, առէ՞ք մուրձերնիդ: (Մուրձերնին  
կ'առնեն եւ եղանակաւ սալերուն վրայ կը  
զարնեն): Բերկրալից գնչուին տաժանելի աշ-  
խատութեանց ո՞վ կրնայ խիզախել . . . երկինքէն

իջնող երկու անուշիկ ճառագայթ, երկու չըք-  
նալ աչքերու նայուածքը. ո՞վ կրնայ իւր սըր-  
տին վիշտերն արտաքսել . . . գնչուհին: (Մար-  
դերն իրենց զաւարը կանանց կ'երկնցունեն,  
ոյժ զինի կը լեցունեն): Լցէ՞ք, լցէ՞ք գաւաթ-  
նիս անտապակ գինիէն . . . զարնենք գաւաթ- եւ  
ամեննիս ալ երջանիկ ըլլանք, եւ այսպիսի  
պայծառ օրուան ծագելուն ուժով գործի սկը-  
սինք, արդ զուարթ գնչուին աչքին ո՞վ հաձելի  
է միշտ . գնչուհին . . . (Գնչուները Ազուցենայի  
շուրջը կը բոլորին):

### Ազուցենա

Ա.

Բոցաձարձատ վառի խարոյին . . . հեռուէն  
կոհակի պէս դիմէ ամբոխն . . . զի խոնարհ  
կը քաշկոտուի կին մը գէպի տանջարան . . .  
զի մահագոյժ զանգակն հնչէ . . . և դաժան  
խարոյին իր լոյսն ահեղաձայթ բոցեղէն,  
ժայթքեցնէ ի վեր յեթեր՝ ուղիսօրէն:

Բ.

Ի լոյս բացոյն, կալանաւորն վերջապէս  
կը մօտենայ գունատ, մարած, այլ ի տես  
նորին, գոռայ աղմուկ տօնի ցնծագին  
արձագանգ տայ, կրկնէ երիցս զայն ուժգին  
եւ մահագոյժ զանգակն հնչէ . . . և դաժան  
խարոյին իւր լոյսն ահեղաձայթ առժամայն  
կարմրագոյն երփնէ զեթե՛րն անսահման:

Գնչուներն . — ի՞նչ տխուր է այդ երգդ . . .  
Ազուշէնա . — Բայց պատմութեանը չափ չէ ,  
զոր չեմ մոռնար . . . (Մանրիկին դպոնալով եւ  
ցած) վրէ՛ժ , վրէ՛ժ :

Գուսանը (ինքնին) . — Միշտ այս արտասո-  
վոր խօսքը կ'ըսէ . . .

Գնչու մը . — Բարեկա՛մք , ինձ լսեցէ՛ք , ապ-  
րուստնիս պէտք է ճարենք , օ՛ն , քաղաքին  
ճամբան ձեռք առնենք . . . Երթանք . . . (Գոր-  
ծինին առնելով կ'իշնեն դեպի հովիս , երգե-  
լով) :

## ՏԵՍԻԼ Բ.

ԱԶՈՒՉԷՆԱ , ԳՈՒՍԱՆԸ

Գուսանը (ոժի եղելով) . — Աւասիկ առան-  
ձին ենք . . . ի՞նչ է այդ ահոելի պատմութիւնը :

Ազուշէնա . — Դո՞ւն ալ չես գիտեր զայն . . .  
այո՛ , իրաւունք ունիս , ըստ որում քու փա-  
ռասիրային մանկութիւնդ ուրիշ հոգեր չու-  
նեցաւ : Այլ ասիկայ , աւա՛ղ , մեծ մօրդ պատ-  
մութիւնն է որդեակ իմ , պիտի հաւատա՞ս ին-  
ծի : Հարուստ ամբարտաւան մը սուտ կերպով  
ամբաստանեց զայն , որպէս թէ մամդ անոր  
որդին կախարդած ըլլայ : Եւ ահա ճիշդ հոն ,  
ուր բոցը կը բարձրանայ այժմ , ահա հոն այ-  
րեցին տարաբաղդ կինը . . .

Գուսանը . — Ո՛հ , խղճալի , բան . . .  
Ազուշէնա . — Ահա այն տեղը քաշքշելով  
տարին կապած կապկպուած այն ողորմելի ող-  
ջակէզը զոր բոցերու գատապարտեր էին :  
Ի հեռուստ անոր կը հետեւէի ես ալ , և ահա  
սիրեցեալ մայրիկս հոգի աւանդած ատեն զիս  
տեսնելով օրհնեց . . . այլ խմադուժ ամրոխ մը  
ճամբաս կորեց , և մողեգնաբար աղաղակներով  
նախատեց խեղճ ողորմելին : Ահա այդ վերջին  
վայրկենին էր որ ինձի «Վրէժս ա՛ռ» ըստ .  
— ուստի անիծեալ ըլլամ , եթէ ատելութիւնս  
պակսի . . .

Գուսանը . — Եւ դու վրէժդ առի՞ր :  
Ազուշէնա . — Օր մը կոմսին զաւակը յա-  
փրշտակեցի և հոս բերի . . . Արդէն բոցը կը  
բարձրանար . . .

Գուսանը . — Բո՞ցը . . . ո՛վ երկինք . . . ոճիր  
մը . . .

Ազուշէնա . — Ի՞նչպէս կուլար , աղի ար-  
ցունք կը թափէր . . . խեղճ զոհը . . . սիրոս  
խորտակուեցաւ , տրոփեց , պահ մը մեղմա-  
ցաւ . սակայն յանկարծ ահոելի տեսիլ մը , ա-  
ղետագոյժ ուրուական մը գէմս արձանացաւ  
. . . հալածեց զիս անինայ . . . կը զաւանցէի . . .  
սոսկալի երազ . . . գեռ աչքիս գէմ կը տեսնուի  
զարհուրելի խարոյկը . . . մայրս կը յառաջանայ  
ինձի , և տակաւին կը լսեմ իւր մահառիթ խօս-  
քը , «Վրէժս առ» . և յայնժամ դողդոջուն ձեռ-  
քերովս անմեղ զոհը կրակը նետելով ուխտա

կատարեցի . . . աչքիս տեսիլը անմիջապէս ցըրուեցաւ . . . միայն բոյը կը վառէր , իսկ խարոյկը լսափեր էր զայն . . . այն ատեն անթարթափ աշքերս ասդին դարձունելով , ո՞վ Ասուած , ի՞նչ կը տեսնեմ , կոմինն որդին ողջ առողջ կեցա՛ծ . իսկ իմ որդին էր զոր իմ իսկ ձեռքովս կրա՛կն էի նետեր . . .

Դուսանը . — Ո՞վ սոսկմանս , ի՞նչ ոճրալից և մոլեգնութեա՛ն օր . . .

Ազուչենա . — Ա՛հ , մահառիթ սխալմունք . . . զարհուրանքէս մազերս կը ցցուին . . . (Ազուչենա սրայոյդ նստարանին վրայ կ'ընկնի . իսկ Մանրիկ պահ մը զարհուրեալ կ'ապշի) :

Մանրիկո . — Ուրեմն ես քու որդին չեմ , ո՞վ եմ հապա , ըսէ :

Ազուչենա (շփորելով) . — Այո՛ , այո՛ , դու իմ որդիս ես :

Մանրիկո . — Դու իմ մայրս ես , ուրեմն :

Ազուչենա . — Այո՛ , մայրդ ես եմ . բայց քանի որ այդ մահառիթ յիշատակը աչքիս առջին կուգայ , միտքս ցնորելով ըստծներս չեմ գիտնար . բայց դու իմ ամրող մայրենի և խանդակաթ սէրս չե՞ս գիտեր :

Մանրիկո . — Այո՛ , կը հաւատամ և գիտեմ :

Ազուչենա . — Այո՛ , մանկութիւնդ ես պահպանեցի : Չե՞ս յիշեր , երբ իրիկուն մը աներկիւղ քեզ հետեւեցայ պատերազմին դաշտը , կ'ըսէին թէ մեռած ես . սակայն ես աղատելով իմ գուրգուրական խնամքներովս կեանքդ

քեզ վերադարձուցի և իմ աննկարագրելի սիրովս վրկեցի երիտասարդութիւնդ :

Գուսանը . — Այն անիծապարտ օրն առած վէրքերս հո՛ս , հոս կուրծքին վրայ են , իմ ցիրուցան եղած բանակիս մէջտեղը թշնամեաց սպառնալիքներուն միայնակ կը դիմադրէի , արդարեւ վիրաւորուեցայ , փառաւորութիւն կերպով . կունա կոմսը՝ իմ ահարկու թշնամիս , ձին քշելով վրաս դիմեց և ահա այն ատեն տիգահար թաւալեցայ դիւցազնաբար :

Ազուչենա . — Օր մը մենամարտի մէջ կոմսն իր կեանքը քեզի պարտաւորեցաւ , քու բազուկդ մահատու հարուած մը կը սպառնար այն անգութին , և բաշխեցիք . . . ո՛հ , է՞ր ուրեմն , այն ապաշնորհը . . . ապո՛ւշ դու , (իւրովի) տարօրինակ գթութիւն . . .

Գուսան . — Ա՛հ , մայր իմ , չեմ կրնար ըսել , զի ես ալ չեմ գիտեր : Կրիէսին մէջտեղը փոշիներու մէջ թաւալ գլորեցաւ սատակիչ դաշոյնիս տակ , սոսիս իմ ձեռքս էր . . . եւ ահա յեղակարծ գաղտնի սարսափ մը բռնեց զիս . . . բազուկս առկախ մնաց . . . գողացի . . . ի՞նչ մահացու ժամ էր այն . . . մեռելատիպ ցուրտ մը արիւնս սառեցուց , ապա ի վերուստ գորովալից և հեծծագին ձայն մը եկաւ ականջիս որ կ'ըսէր , «Գթա՛ վրան» :

Ազուչենա . — Ա՛հ , կոմսին սիրով ազնիւ զգացման չէ ընդունակ , որդեա՛կ , ես նորահամար ամենանուաստ մահ կը մազթեմ . եթէ

Երբէք իշխէ մարտնչիլ, պէտք է ոտքիդ տակն  
առնես և զրիժառու երկաթդ այն վատողիի  
սիրտը միւես անխնայ:

Դուսանը. — Ըուիզ պատգամաւոր մը դէպի  
մեզ կը խրկէ, ի՞նչ կ'ուզէ արդեօք: (Փողի  
ձայն):

Ազուչեա (իւրովի անուշադիր, մտազբաղ):  
— Վրէ՛ժ, վրէ՛ժ:

### ՏԵՍԻԼ Գ.

ԱՌԶԻՆՆԵՐԸ, ՊԱՏԳԱՄԱԿՈՐԸ

Մանրիկօ (պատգամաւորին). — Պատերազմէն  
ի՞նչ լուր, պատմէ տեսնեմ:

Պատգամաւորը (նամակ մը տալով). — Կար-  
դացէ՛ք այդ նամակը, և պիտի իմանաք:

Մանրիկօ (կարդալով). — Կասթէլոր անձնա-  
տուր եղաւ, փութա՛ անյապաղ, որպէս զի  
իշխանին հրամանին համեմատ պաշտպանես և  
հոկես քաղաքին: Իսկ մեր յաջողութեան համ-  
բաւին հետ քու մահուանդ տարածայնութիւնն  
ալ լէ՛սնորային ականջն հասած ըլլալով Սուրբ  
Խաչի վանքը կուսական քօղ պիտի առնէ այս  
երեկոյ: Արդա՛րդ Աստուած:

Ազուչեա (դող եղած). — Ի՞նչ կայ, որդ-  
եակ իմ...

Մանրիկօ (պատգամարերին). — Փութա՛ հո-

վիտն . . . և անմիջապէս նժոյգս թող պատրաս-  
տեն:

Պատգամաւոր. — Ահա կ'երթամ:

Ազուչեա (կեցնելով զայն). — Կեցի՛ր:

Մանրիկօ. — Գնա չուտով . . . վազէ . . . ժամը  
կ'անցնի . . . գնա և սարի ստորոտը սպասէ ինծի:

Ազուչեա. — Ո՞րպիսի խոռվութիւն է այդ,  
ի՞նչ ունիս:

Մանրիկօ (ինքնին). — Աւա՛զ, պիտի կոր-  
սընցունեմ զայն, ո՛ աղետալի վիճակ, յաւէտ  
պիտի թոկ ձեռքէս այն հրեշտակը:

Ազուչեա. — Խելքի՞ն եկած է, ո՛վ Աստ-  
ուած, ո՞ւր և ինչո՞ւ կը մեկնիս:

Մանրիկօ. — Մնաս բարեա՛ւ . . .

Ազուչեա. — Ոչ, կեցի՛ր, ինձ մտիկ ըրէ:

Մանրիկօ. — Մահացու հրաման է այդ.

Թո՛ղ զիս:

Ազուչեա. — Ոչ, ես քու մայրդ եմ, ո՛  
պաշտելի որդեակդ իմ. (նրամայական ձայնով)  
այդպէս կ'ուզեմ, դու կ'ուզես դարձեալ  
կեանքդ վտանգել, անուշադի՛ր տկարութեա-  
նըդ, խոյս տալ կ'ուզես երբ ես կը պաղատիմ.  
Հոն մահ կը սպառնայ քեզ, ո՛հ, արիւնս կը  
սառի սոսկումէս, սանձէ եռանդդ միթէ կըր-  
նա՞ս արցունքներուս հեղուլը տեսնել, գթա  
վշտացս վրայ:

Մանրիկօ. — Այս մէկ վայրկեանը՝ որ ինծի  
համար անդին է, կրնայ յափշտակել ձեռքէս  
զայն զոր կը սիրեմ: Ո՛հ, ոչ ոչ, երկինքն իսկ

չկրնար կասեցունել զիս : Մա՛յր , թո՛ղ որ երթամ , տեղի տուր աղաչանացս . ո՛հ , չե՞ս տեսներ դառնաղէտ վիշտերս , մայր իմ , թո՛ղ զիս , ապա թէ ոչ կը մեռնիմ , հո՛ս , քու առջեւ : Մեկնիմ , ինձ սպառնացող ձախողուածն իմ զօրութիւնս կը կրկնապատկէ , մա՛յր , մնաս բարեւ ... (Գուսանը Ազուշենայի ձեռփեն առդպրելով կը հեռանայ) :

### ՏԵՍԻԼ Ք.

ՎԱՆՔ ՄԸ , ԽՈՐԸ ԾԱՌԵԲ , ԳԻՇԵԲ

Կոմսը , Ֆերնան եւ յանի մը համախոհներ վերակուներու փարքուած գաղտագողի կը յառաջանան :

Կոմսը . — Դեռ ոչ ոք կայ , և տակաւին սովորական երգերը չեն լսուիր : Ուրեմն ժամանակին եկած ենք :

Ֆերնան . — Ի՞նչ ընել մտադիր ես , Տէր իմ , մի գուցէ յանդուգն ձեռնարկ մը :

Կոմսը . — Արդարեւ յանդուգն դործ , այլ սիրտ առնունք , այն աննուած սէրն , ուրիշ ի՞նչ կարող էր ինձ թելադրել : Իմ պաշտելի նազուհիս , իմ յաղթական մրցանակս պիտի ըլլայ : Երբ իմ սիրոյ ոսոխս ինկաւ , թուեցաւ ինձ թէ ամէն խոշնդոտ անհետացան , և

ահա սիրեցեալս մէջտեղ դնել կ'ուզէ ամենազօր և անվանելի խոռոշ մը , վա՛նքը : Բայց ո՛չ , այդ չպիտի լինի . ո՛ իմն էէոնորա , իմն եղիր , կը պաշտեմ քեզ : Նորա նայուածքը , նորա քաղցրիկ ժպիտը շողողուն և աստղանչոյլ , զառանցանքներս կը յաւելու , և նորա շնչածօդը երբ կը չնչեմ , երջանկութիւն կը չնչեմ , երբ անոր համար կը հեծեծեմ ես , գթալու է նահատակութեանս վրայ , ըստ որում զիս բեռեկտող նետը մինչեւ սրտիս խորը միսած է : Ոչ , էէոնորան ինձմէ ուրիշի չպիտի լինի : (Զանգակի ձայն) Բայց ի՞նչ ձայն է այս , ո՛վ երկինք :

Ֆերնան . — Ահաւասիկ արարողութիւնը կը սկսին եկեղեցին :

Կոմսը . — Օ՛ն ուրեմն , մինչդեռ տակաւին սեղանին առջեւ ուխտը չէ կատարած և կուսկան քօղը չէ առած , պէտք է փախցնել զայն :

Ֆերնան . — Խոհեմ և զգոյշ ըլլանք , Տէր իմ :

Կոմսը . — Ես գիշեր ցերեկ այդ սէրը միայն կ'երազեմ , և ուրիշի ձայնի չեմ անսար ... գուստածուկ դարձուածին ետին պահուէ , (կը պահուին) էէոնորան իմն պիտի լինի առյաւէտ :

Ֆերնան եւ համախոհն . — Ի՞նչ յանդուութիւն , երթանք պահուինք ստուերին մէջ ... ձայն մի՛ հանէք .. լո՛ւս , պէտք է հնազանդինք անոր :

Կոմսը . — Ո՛ օրհասական ժամ , սահէ՛ շուտ

գնա՛, եթէ Երկինք իսկ հակառակի, պիտի  
խիզախիմ, իմս լինելու է այն սիրողը, այն  
հեշտ ու քաղցրիկ դէմքը. իմս պիտի լինիս,  
ո՛ ամենախրոխտ չքնաղուհի դու, և երջան-  
կութեան օրեր պիտի վայելնք: (Համախոհ-  
ներուն յով կ'երբայ):

Պար միանձնուիներու (դուրսէն)

Յաքսոր ենք մեք յերկրի  
ձայն մի փրկարար  
մեր մէջ կոչէ քեզ,  
Երկնային խորհուրդի:  
  
Ի մենակեաց յայս վայր  
փայլի արեւ պայծառ  
յանդորրու յայս կայան  
վիշտ՝ փորձանք՝ ցաւ չկան:  
  
Եւ Տէրն, ուղիղ սրտին  
պարգեւէ զիւր չնորհքներ,  
եւ զգալի բարեօք  
պսակէ ջերմ եռանդներն,

(Միանձնուիի ժեսարան կուզան Լենորայի  
ընդառաջ):

### ՅԵՍԻԼ Ե.

Լենորա, ինեզ, յանի մը նաժիշտներ:

Լենորա. — Ինչո՞ւ կուլաք:

Ինէզ. — Աւա՛զ, բարեկամուհինիս կը կոր-  
ունցունենք առ յաւէտ:

Լենորա. — Ո՛հ, մի ցաւիք վրաս: Այսու-  
հետեւ ինձի համար այս կեանքիս մէջ ոչ եւս  
յոյս կայ . . . մահառիթ օրէնք . . . պէտք է նուի-  
րեմ զիս Անոր որ այս աշխարհիս չարեաց մէջ  
եղողին միմիթարիչն է. ուստի կը ցանկամ վա-  
յելել այն խաղաղաւէտ անդորրութիւնն զոր  
Երկինք իւր ընարեալներուն համար պահած է  
այս Երկրիս վրայ: Ուրեմն մի՛ արտասուէք, մի՛  
ողբաք այլ եւս: Եւ դու ինէզ՝ որ սիրելագոյն  
իմ էիր, յաւէտ մնաս բարեաւ: (Դուրս եղիւր  
պահուն Կոմալ մեկենիմէկ կը տեսնուի):



### ՅԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ, ԿՈՄՍԸ, ՖԵՐՆԱՆ, ՀԱՄԱԽՈՀՔ

Կոմսը (առաջ գալով). — Ո՛չ, բնաւ երբէք:

Ինէզ եւ Պարն. — Կո՞մս . . .

Լենորա. — Ամենամե՛ծդ Աստուած . . .

Կոմսը. — Ա՛հ, կեանքս վկայ, շղթայներդ  
պիտի խորտակեմ ես:

ԻՅԵզ եւ Պարն . — Մըբապի՛ղծ յանդգնութիւն . . .

Լէնոնրա . — Եւ ի՞նչ իրաւամբ . . .

Կոմսը . — Հստ որում դու ի՞մս ես :

(Կոմսը բռնել կ'ուզէ Լէնոնրան , Մանրիկօ յանկարծ մեջտեղերթին կը նետուի . ընդհանուր շփորութիւն) :

Ամենիը . — Ա՛հ . . .



### ՏԵՍԻԼ Ֆ.

#### ՆՈՅՆԲ ԵՒ ՄԱՆՐԻԿՕ

Լէնոնրա . — Ո՛վ երկինք , Մանրիկօ , ստոյգ դո՞ւ ես արդեօք , ո՞ղջ ես , կ'ապրի՞ս տակաւին , մեռած չե՞ս ուրեմն . գթածն Աստուածէ որ քեզ հսու խրկեց . . . ո՛վ դու , զոր յանչափս կը սիրեմ . . . ո՛րպիսի երկնային բերկրութեամբ կը լնուս սիրոս , միթէ երկինքէ՞ն վար կ'իջնես դու , թէ չէ՞ ես եմ որ երկինք վերացայ :

Կոմսը . — Միթէ մեռելներն իրենց գերեզմանէն կ'ելլե՞ն և միթէ գեհենք իրենց որսը և իմ զոհածս դո՞ւրս նետեցին իմ թշուառութիւնս պատճառելու համար :

Մանրիկօ . — Քեզ պատժելու համար , ինչպէս կը տեսնես , վրէժխնդիրն Աստուած զիս երկրիս վրայ ողջ թողուց : Այո՛ , ասպետ մը ,

իւր անվեհերութեամբ այսպէս ոչինչ կը հանէ ոճրագործութիւնդ :

Կոմսը . — Ա՛հ , եթէ քու գարշելի կեանքիդ թելք չի կտրեցաւ , վկայ հոգիս , ո՛վ խորհըրդաւոր ուրուական , պիտի մեկնիս այս տեղէն :

Մանրիկօ . — Ցանդուգն առեւանգչին հիւսուածքը խորտակելու համար հոս առաջնորդեց զիս երկինք :

Լէնոնրա . — Ա՛հ , երկինքն է որ կը բացուի ինձի համար :



### ՏԵՍԻԼ Ը.

Նոյնի , Ռուիզ խումբ մը զինեալ մարդիկներու զլուխն անցած կը վազեմ :

Ռուիզ եւ մարդիկը . — Կեցցէ՛ Մանրիկօ :

Մանրիկօ . — Ա՛հ , զինակից բարեկամք իմ :

Ռուիզ . — Եկէք եկէք :

Մանրիկօ (Լէնոնրայի) . — Պէտք է հետեւիք ինձի , Տիկին :

Կոմսը (ընդիմանալով) . — Ժպի՛րհ :

Լէնոնրա . — Ա՛հ :

Մանրիկօ . — Ե՞տ , քաշուէ՛ (Կոմսին) :

Կոմսը . — Զեռքէս խլե՞լ կ'ուզես զայն . . . ոչ , երբէք չպիտի կարենաս . (առւրը կը բաշէ բայց Ռուիզի մարդիկը զինարափ կ'ընեն զինը) :

Ֆէրնան եւ համախոնիք . — Մատնուեցանք :

Կոմար . — Ա՛հ , կատաղութենէս խելքս գըշ-  
խէս կը թռի , սիրտս կը հրդեհի :

Լէնոնրա . — Սարսուռ տիրեց վրաս , կը  
դողամ :

Մանրիկօ (կոմսին) . — Թշուառա'կան , կեան-  
քըդ , այս' , արեւդ նզովեալ է :

Բուիզ եւ իրեններն . — Այս' , Տէր իմ , Աս-  
տուած մեր ջանքերն օրհնեց :

Կոմս . — Ոհ , կը զայրանամ , կը կատղիմ .  
Երկուքնիդ ալ անիծեալ ըլլաք :

Ֆէրնանս եւ համախնիք . — Անձնատուր ե-  
զիր , այս պահուս անձնատուրթիւնը վատո-  
գիութիւն չհամարուիր : (Մանրիկօ Լէնոնրան  
կ'առնէ կը տանի : Իսկ կանայի սարսափահար  
դեպի վանի կը վազեն) :

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՈՐՈԴ

### ԳՆՉՈՒՀԻՒ ԶԱՒԱԿԸ

Թաճակ , Թասրէլորի պարապաց առշին . — Աջ  
կողմբ կունա կումսին վրանիր : Պահապաններ ա-  
մենուրեք . զինուորներ ոմանք կը խաղան , այլ  
կը նեմեն , եւալլն :

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋՔՆ

Պար զօրաց , ապա Ֆէրնանս : Մէկ յանի զօր-  
քէ՝ խաղալով

Այս քուէները թէեւ մեզի համար մեծ հրա-  
պոյր ունին . բայց քիչ մը ետքը զինուց  
խաղ ալ սիտի խաղանք :

Ուրիշ զօրքեր (զէնթէրնին սրելով) . — Մենք  
ալ պողովատիկին արիւնը քամենք առանց կաց  
և դադար ունենալու :

Ոմանի . — Որպէս զի վերջապէս պաշտրումը  
լինայ :

Այլ . — Տակա . ին պիտի սպասենք .  
Ամենիլ . — Վազը արեւը ծագելուն պէս  
պիտի յարձակինք Քասթէլորի վրան : (Փողե-

րու ձայն , ամենին աշ այն կողմ կը նային) :  
Ոմանք . — Աւասիկ սպասած զօրավիգնիս  
կուգայ : (Սպառազին զօրիւր կ'անցմին բանա-  
կին մէջին) :

Ֆէրնան . — Սիրելի զինակիցք , ձեր անվե-  
հերութիւնը անգործ չպիտի մնայ ընդերկար ,  
ձեր անհամբերութեան համար հոյակապ աւար  
և փառաւոր շահատակութիւններ , և ձեր աշ-  
խատանաց համար փառքեր պատրաստ են ձեզ :  
(Զօրիւրը կը նեռանան) :

### ՏԵՍԻԼ Բ.

Կոմար (վրանին դուրս եղելով դեպի Քաս-  
րելու անհանդարս կը նայի) . — Հակառակոր-  
դիս գրկացը մէջն է սիրուհիս . ո՞հ , մահա-  
սիթ մոածում . որ ճնշեալ հոգիս կը հալածէ  
միշտ , անմի՛տ մոլեգնութիւն , հակառակորդիս  
գրկացը մէջն է այն . բայց թո՛ղ զարհուրի  
և գողա՛ : Արեւը ծագելուն պէս մահացուցիչ  
վայրկեանը պիտի լուսցնէ . . . Ո՞հ , լէոնորա . . .  
(աղմուկ) :

### ՏԵՍԻԼ Պ.

ԿՈՄԱՐ , ՖԷՐՆԱՆՏ

Կոմար . — Ի՞նչ աղմուկ է այս :  
Ֆէրնան (վազելով կուզայ) . — Գնչուհի մը  
բանակին շուրջը գաղանապէս կը թափառէր . . .  
զինուոր մը զայն տեսնելով վրան դիմեց թէ-  
հւ , բայց նա խոյս տուաւ . . .

Կոմար . — Զի բանուցա՞ւ :

Ֆէրնան . — Այո՛ , Տէր իմ , բանեցին : (Աղ-  
մուկը կը մօսենայ) Ահաւասիկ կը բերեն :

### ՏԵՍԻԼ Պ.

Նոյնի , Ազուցենա ձեռուղները կապուած ,  
զինուորները կը ժաշշեն . ետեւին զինեալ զօր-  
իւր :

Զօրիւր (շնելով Ազուցենան) . — Ո՞ն , քալէ՛ ,  
քալէ՛ :

Ազուչենա . — Օգնութիւն , չնո՞րհք , ինչո՞ւ  
կը սպառնաք , ես ի՞նչ չարիք ըրի ձեզի :

Կոմար . — Թողէք որ մօսս գայ , (Ազուչ-  
ենան կոմսին ասցին կը շնելի) : Զըլլայ թէ ստե-  
լու յանգդնիս , կ'իմանա՞ս :

Ազուչենա . — Հարցուր , ի՞նչ կ'ուզէք ինձմէ :  
Կոմս . — Ո՞ւր կ'երթան :

Ազուշէնա . — Աստուած գիտէ այդ :

Կոմը . — Ի՞նչ բոել է :

Ազուշէնա . — Զե՞ս գիտեր որ գնչուհին հեռուները կը թափառի , կը քալէ , կ'երթայ գողղոջաքայլ , հալածեալ , ահնպատակ . իմ յարկս ապաւէնս երկինքն է , և աշխարհ՝ հայրենիքս :

Կոմը . — Ուստից կուգաս դու . . .

Ազուշէնա . — Պիսգայիի կողմերէն . այն անջրդի և անապատ լեռն ու սարն է իմ ապատանս :

Կոմը . — Պիսգայիի՞ն :

Ֆէրնան . — Ա՛հ . . . այդ անունը , Աստուած իմ , ի՞նչ կասկած է :

Ազուշէնա . — Իբրեւ խոնարհ գնչուհի աղքատ և անվիշտ կեանք . կը վարէի և անցուցած օրերս բերկրալից էր . . . ես երջանիկ էի թէեւ իմ զաւկովս , բայց ապերախտը , եղուկ , մոռցաւ զիս . Ուստի անոք մնացի և մոռարավ , վայ իմ խելքին , այդ սիրական գաւկս կը փնտուեմ , որ ձեռքէս թռաւ : Ա՛հ , աշխարհիս վրայ չկայ խանդակոթ գորով ունեցող մը որ իմ սիրոյս հաւասարն ունեցած ըլլոյ :

Ֆէրնան (ինֆնին) . — Այս կինը , ո՞րպիսի նմանութիւն :

Կոմը . — Պիսգայիի մէջ չատ ատեն բնակեցա՞ր :

Ազուշէնա . — Այս' , այս' :

Կոմը . — Կը յիշե՞ս ասկէ քսան տարի առաջ , օր մը , կոմսի մը որդին օրրանին մէջէն յափշտակելով առին տարին գէպի լեռները :

Ազուշէնա . — Ո՞վ ես ուրեմն դու , ըսէ . . .

Կոմը . — Ես այն հէք մանկան եզրայրն եմ :

Ֆէրնան (մեկուսի) . — Այս կինը ա'ն է . . .

Ազուշէնա . — Ա՛հ , գթացէք գառնակսկիծ ցաւերուս , անողոք մի՛ ըլլաք , լսէ՛ք պաղատանքներուս , ազատ ձգեցէք տարարադդ մայրը որ իւր այնչափ սիրական զաւակը փնտոէ :

Ֆէրնան (Ազուշէնայի երեսը ակամայ տեսած զարհուրանիը նշմար լով) . — Այս' , ա'ն է :

Կոմը . — Արգեօք անոր վերաբերեալ տեղեկութիւն մը ունի՞ս :

Ազուշէնա . — Ե՞ս . . . ո'չ . . . ո'չ . . . թողէ՛ք զիս , կը պաղատիմ . . .

Ֆէրնան . — Կեցի՛ր . . . թշուառական :

Ազուշէնա . — Աստուած իմ . . . կորսուեցայ . . . (կամաց Ֆէրնանին) Աստուծոյ սիրոյն , մի՛ մատներ զիս :

Ֆէրնան (մեկուսի) . — Ճիշդ ինքն է , (Բարձր) երախայն այրող ոճագործ կինն ահա այս է . . .

Կոմ . — Երկի՞նք , ի՞նչ կը լսեմ . . .

Ազուշէնա . — Լոէ՛ : (Կոմսին) Սուտ է կո՛մս , սուտ է :

Ֆէրնան . — Այս' . . . մանուկը դուն այրեցիր . . .

Կոմ . — Դո՞ւն , թշուառական . Ուրեմն արժանի պատուհանէդ չալիտի աղատիս , քու

օրհասդ մօտ է, գիտցիր: Պիտի պատժուիս,  
(Զօրքերուն) կապեցէք սա ամրապինդ:

Ազուչենա .— Ա՛հ, չնորհք, Տէր իմ, գթու-  
թիւն: Մանրիկօ', զաւակս, հասիր, ազատէ',  
պաշտպանէ քու թշուառ մայրդ:

Կոմս .— Ի՞նչ, դու Մանրիկօ մայրն ես  
ուրեմն, կեանքդ, արիւնդ իմն է այժմ:

Ազուչենա .— Ա՛հ, դաժան բարբարոսներ,  
թուլցուցէք կապերս, որոնք չարաչար կը տան-  
չեն զիս. գթացէք մարտիրոսութեանս վրայ,  
անձկութիւնք կը խորտակեն զիս և ցաւերու  
մէջ հոգի կուտամ. . . ո՛ Սասուած, այս իրենց  
անողոք զառանցանքէն ո՞վ պիտի փրկէ զիս:  
(Կոմսին) Դողա, կոմս, Երկինք օր մը իմ վրէժս  
պիտի հանէ քեզմէ և պիտի պատճէ քեզ:

Կոմս .— Եւ ի՞նչ միթէ, այն մատնիչը, այն  
գեհնենի սադայէլը քու որդի՞դ էր: Ի՞նչ ու-  
րախութիւն .— դուք երկուքնիդ ալ միեւնոյն  
սրով պիտի զարնուիք, և եղբօրս Ակեալ՝  
մեռեալ հոգին վերջապէս պիտի հանդչի վրի-  
ժառութեամբ:

Ֆէրնան .— Վրէ՛ժ, այո՛, վրէ՛ժ, դէպի  
խարոյկ պիտի քալես, գողա ուրեմն, պիտի  
մեռնիս Գեհենի սադայէլ, դու և որդիդ մէկ  
սրով պիտի զարնուիք: Սակայն քեզ լսիող  
կրակը չպիտի լինի միայն արժանի պատիժդ, այլ  
դժոխոց հուրը պիտի ըլլայ քու հոգւոյդ յա-  
ւիտենական խարոյկը, (Կոմսը նշան կ'ընէ,  
զօրքերը կը տանին զնուիին: Կոմսը վրանին  
ներ կը մտնէ, Ֆէրնանը ալ ետէւել):



### ՏԵՍԻԼ Ե.

ՄԱՆՐԻԿՕ ԳՈՒՍԱՆԸ, ԼԵՈՆՈՐԱ, ԲՈՒԻԶ

Քասրէլլարի դղեակին մէջ մեծ դահլիճ մը .  
— Խորը պատուհան եւ պատշգամ մը:

Լենորա (ականջ դմեղով) .— Այս ի՞նչ գէն-  
քերու ձայն է . . . զոր հեռուէն կը լսեմ. . .

Մանրիկօ .— Այս պահուս ամէն ոք մեզ կը  
սպառնան, առտուն կանուխ վրանիս յարձա-  
կում պիտի ըլլայ:

Լենորա .— Հաւատա՞մ այդ ըսածներուդ:

Մանրիկօ .— Սակայն մենք՝ պիտի յազթենք  
մեր թշամեաց, ըստ որում մեր բարեկամաց  
և անոնց քաջութեան վրայ կատարելապէս  
վստահ եմ: (Բուիզին) Դուն ալ Բուի՛զ, իմ  
կարձատեւ բացակայութեանս միջոցին անոնց  
վարչութիւնը քեզ կը յանձնեմ. ուստի վերին  
հսկողութիւնդ կրկնապատկեւ չըլլայ որ զանց  
ընես. (Կը մեկնի Բուիզ):

Լենորա .— Մեր հիմենեան հանդէսին հա-  
մար ո՛րախսի տիտուր օր կը ծագի:

Մանրիկօ .— Ո՛չ, պաշտելի գիցուհիս, ի բաց  
մերժէ այդ սեւագէմ նախագուշակը:

Լենորա .— Աւա՛զ, միթէ կարելի՞ է:

Մանրիկօ .— Բու ձեռքդ իմ բաժինս է,  
իմ սիրոյս առ հաւատչեայ գրաւականն է այն.  
ո՞վ դու մէր իմ, միակ յոյսս, թող անթա-

փանց լինի սիրոտք երկիւղի, վասն զի քու աչքերուդ գորութիւնը զիս անպարտելի կ'ընեն պատերազմի մէջ: Իսկ եթէ անգութ ճակատագիրը կամենայ որ մահանամ թշնամեաց զէնքով, հրաժեշտի ողջոյններս տալու միջոցիս միսիթարէ զիս, հաւատուով որ վերջին շունչս տալով պիտի թոշիմ յերկինս, ուր պիտի սպասեմ քեզ որ հոն միանանք: (Մերձակայ մատունկներկենի ձայներ):

Լէննորա. — Ականջ գիր սա կրօնային երգերուն, երկնքին խորհրդաւոր արձագանդն է այս:

Միասին. — Երթա՛նք տաճարը, թող Աստուած օրհնէ մեր երգունի այսօր, և թող Հիմենեան ջահը միացունէ մեր արդէն սիրով միացած որտերը: (Բուրիզ վագեղով կուզայ):

Բուրիզ. — Տէր իմ:

Մանրիկօ. — Ի՞նչ կայ . . . ըսէ շուտով:

Բուրիզ (մատնացոյց զեպի պատուհանը). — Գնչուհին . . . տե՛ս . . . բանտ կը տանին:

Մանրիկօ. — Ի՞նչ կը տեսնեմ, Տէ՛ր Աստուած:

Բուրիզ. — Անգութ դահիճները տանջանքի խարոյկը կը պատրաստեն ահա:

Մանրիկօ. — Աստուած իմ, ի՞նչ սատակի՛չ տանջանք . . . ո՛չ, կարծես շունչս կըսպառի . . .

Լէննորա. — Ո՛ Մանրիկօ, կը գողա՞ս գու:

Մանրիկօ. — Այս . . . որովհետեւ գիտե՞ս թէ ով եմ ես . . . Ես անոր որդին եմ . . .

Լէննորա. — Ա՛չ . . .

Մանրիկօ. — Ա՛չ, անալիտան բարբարոսներ . . . կը զգամ որ պիտի մեռնիմ. ի՞նչ քստմնելի տեսարան . . . Բուրիզ, վութա՛, զօրքերը գումարէ, շուտով թուիր: Այդ վատ խարոյկին ահուելի կրակը, որ իմ էութիւնս կ'այրէ, ա՛հ, առանց բանէ մը վախոնալու անոնց արիւնովը պիտի մարեմ: (Լեռնորային) Դեռ եւս քեզ չը սիրած, ես նորա զաւակն էի. ուստի քու զգացած տաղնապդ պէտք չէ որ զիս հոս վարդնէ: Մայրս զիս օգնութեան կը կոչէ, իմ հաւատարիմ բազուկներս կը հայցէ. պէտք է նորա մօտ դիմեմ: Կամ յաղթելու կամ տապաստ ընկնելու եմ:

Լէննորա. — Անիծեա՛լ օր, սե՛ւ ճակատագիր ծայրագոյն վշտէս լաւագոյն է մահը: (Բուրիզ զօրքերով կուզայ):

Բուրիզ եւ զօրքերը. — Օ՛ն երթանք, արիւնիս քեզի համար նուիրած ենք, օ՛ն յառաջ: Գուսան. — Ի զէ՞ն:

Ամենիք. — Վազե՛նք: (Մանրիկօ Բուրիզ եւ զինուորներ զինուորնեն մօձեղով կը վազեն. իսկ Լեռնորա վշտէն ընկառած կ'երեւայ):



## ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

### ՏԱՆՃԱՆՔ

Ալիաֆէրիայի պալատին մէկ քեւը, որու մէկ անկիւնը աւտարակ մը կը տեսնուի Երկարեայ վանդակով ամրացած։ Մուր զիւեր։

### ՅԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Կենոնրա եւ Բուիզ իրենց վերարկուով փարբուած են։

Բուիզ (ցած ձայնով, աշտարակը ցուցնելով)։ Ահա եկանք . . . կը տեսնե՞ս սա աշտարակը, ահա հոս կը մաշին ծանը և քրէական մեղապարտները, հոս նաեւ շղթաներու տակ կը հեծեն կալանաւորք, զո՞հ տաելութեան։

Լենոնրա. — Գնա՞ այժմ, զիս առանձին թո՞ղ, ինձի համար մի՛ վախնար գու, ես զանոնք պիտի ազատեմ։ (Բուիզ կը մեկիի)։ Ո՛չ, բանէ մըն աւ չեմ զարհուրիր. (ձեռի դրած մատնին ցոյց տալով) ո՞չ ապաքէն անձնապաշտպանութեանս համար, հո՞ս, ապահովագոյն և անսխալ ու մշտապարաստ ապաէն մը ու-

նիմ, մա՛կը. — Ա՛հ, ո՞վ իմս ամենացանկալի, այս խաւար գիշերուան մէջ, այո՛, քու մօտդ եմ ես. — Ո՞վ հեղասիւք զեփիւռներ, քաղցրի՛կ արձագանգ, գացէ՛ք պատմեցէք նմա, թէ այժմ ես իւր մօտը կը հառաչեմ. . . տարէ՛ք հասուցէ՛ք անոր իմ սրտիս հեծիւններն . . . հաւատարիմ սիրոյս սիւքը՝ դէպի անողորմ բանտը տարէք ձեր թեթեւասլաց թեւերովն իմ սրտիս հառաչանքներն . . ո՛վ նիրհ երազոց, նորա արտեւանանց վրայ տարածէ՛քու թեթեւ ձեռքդ և հմայիչ անուրջով մը ամոքէ նորա թշուառութիւնը, քաղցրի՛կ սիսալանքով, հեշտալի՛ պատրանքով. ա՛հ Աստուած իմ, վշտացս անհունութիւնը մի՛ պատմեր իրեն։ (Մեռելոց զանգակի ձայներ, ապա երգերը կը լսուին)

Պարն (դուրսկեմ). — Աստուա՛ծ մեր գթա, ողորմեա մեր եղրօր, որ հրաժարի ի յաշխարհէ, ողորմեա՛ց Տէր, ըստ անսպառ գթութեան քում, ազատեա՛ ի գեհեն հրցն. . .

Լենոնրա. — Մեռելոց սոյն երգը տիսուր սոսկումով կը պատէ զիս, սիրոս կը խորտակուի, այս անիծեալ ժամուն զարհուրելով կը խոռովիմ. ո՞հ, մի գուցէ այս գուռներն անոր համար միայն բացուին և նորա անկենդան մարմինը գուրս բերեն հոնկէց։ (Պահ մը իւր մտածութեանց մեջ ընկլիմած մնայի եւել սրափելավ կ'ուզէ հեռանալ. բայց մեկենիմկի աշտարակին հառաջանայն երգ մը կուզայ ականջին, Լենոնրա կը կենայ)։

Մանրիկո (աշշարակեն) · — Աստուծ իմ,  
առ քեզ կարդամ, ա՛ռ զոգի իմ յինէն ընդ  
հուպ, շատ իսկ տքնեալ տանջեցայ · · · յաւէտ  
միաս բարեաւ վենարա · · ·

Հեղինքա . — Սստուածիմ, հասիր ինձ օդ-  
նութեան :

Խումբը (կը կրկնէ մեռելոց երզը) : — Տէ՛ր  
Աստուած մեր գի՞ւած . . . եւ այն

լենուա . — Մահը կը պատէ զիս . . . ահա  
հնչեց ժամն . . . հոգիս կը խռովի . . . աչքիս ա-  
ռաջ պիտի մեռնի . ո՞հ , եթէ սիրեցեալս  
նա մեռնի , ո՞հ , թող ես եւս իյնամ . և եր-  
կուքնիս միատեղ ապրինք երկնքին մէջ . . .

Մանրիկո . — Եթէ քու սիրոտ իմա է , ա-  
ւելի երջանիկ կը մեռնիմ ես . — ո՞հ , յիշատակ  
մը տուր ինձի , Լէսնորա , մի՛ մոռնար զիս ,  
միաս բարեաւ . . .

Աշնուրա . — Ո՞ւ սիրելիս , որ պաշտեմ քեզ ,  
գեռ եւս քեզ ախսնել կ'ուզեմ , անձկութիւնն  
կ'սպաննէ զիս . . .

Պարն կրկին մեռելոց երգը կ'երգէ . — Աստ-  
ուած մեր գթած , եւ այլն : Ե՞ս մոռնամ քեզ ,  
ոչ , ոչ , երբէք , կեանքս դու ես . այս մէրք  
երկինքն անգամ նախանձեցուց , մէրս մաշն  
անգամ կը սպաննէ . եթէ քու արեւդ խլեն  
ձեռքէդ և շիրիմ գբացուի առջիդ , մի՛ վախնար  
թէ բռնական զօրութիւն մը կարող կ'ըլլայ մե-  
զի զատեւ , ոչ , ես ալ հետպ մեռնիլ կուզեմ :  
(Դուք մը կը բացուի եւ Կուսը յանի մը զինա-  
կիրենը կուզայ . Լենորս մեկ կողմ կը կենայ) :

ՏԵՍԱԿԱՆ Բ.

## ՀԵՇՈՐԱ, ԿՈՄՍԸ

Կոմար (զինակիրներուն) . — Լսեցի՞ք տռւած  
հրամաններս . որդին գահիձի տապարով պիտի  
գլխաւուի , իսկ յետոյ մայրն ալ խարոյկը պի-  
տի այրուի . (զինակիրք աշտարակէն ներս կը  
մնեն) . Այդ տեսակ տիրագութին վրայ ամօթն  
ու այպն կցուած է այլ եւս . ուրեմն թող վա-  
տերու մահուամբ մեռնի , իմ կատաղութեանս  
ձեռքէն ոչ ոք կրնայ խլել . ո՞հ , Լէնորա . . .  
ո՞ անգութ . . . Քասթէլլորն առնուեցաւ , բայց  
ես իր վրայ լուր մը չառի , ի զուր ամենուրեք  
փնտուել տռւի զայն . . . ո՞ւ ո՞ւ է այն ըմբռատո-  
հին . . .

Լենինը (առաջ զայդ) : -- Քու առջիկ :

Կոմիր . — Ո՞վ երկինք , ի՞նչ ձայն է այս ,  
դուք , հոս , ի՞նչ կ'ուզես ուրեմն :

Ակնօրա . — Նա պիտի մեռնի , և կը հարցունես թէ ի՞նչ կ'ուզեմ ես . . .

Կոմար. — Եւ հաւանակա՞ն կ'երեւայ քեզ  
թէ...:

Աշխարհ . — Գիտ վրան , տե՛ս , ես եմ որ  
կը պացածիմ քեզ :

Կոմսը : — Ի՞նչ լիմարութիւն է այս :

Լէնորա . — Գլուխ' . իմ տանջանքիս համար  
գոնէ :

Կոմար . — Անոր համար ո՞չ գթութիւն կայ .

և ո՞չ շնորհք։ Պէտք է ուխտս կատարեմ, միակ նպատակս, ում կը ցանկամ։

Լէննորա (ոտքն ընկնելով)։ — Գթութիւն, գթութիւն, ո՞հ, կը մեռնիմ, շնորհք, տե՛ս վիշտս, տե՛ս ցաւերս, աւասիկ քու ձեռքդ եմ ես, արտասուագին ծնկերուդ փարելով կ'աղբեսեմ. ո՞հ, լաւագոյն է որ իմ արիւնս առնուս, և պողովատիկդ իմ վրայ զարկ, այո՛, թող այս օրս ինձի համար յետին օրն ըլլայ, բայց կալանաւորը ազատ թող։

Կոմը. — Անոր ահաելի տանջանքէն ոչ ոք կարող է փրկել զինքը, և դու ես որ զայն իմ անողոք ատելութեանս և իրեն մահացու վիճակին մատնեցիր։ Ո՞ր աստիճան որ մեծ է քու սէրդ այնչափ ալ ես այլ յայլմէ եղած մոլեգնաբար իւր մահուան տանջանքներուն վայ կը մոտածեմ արփշուութեամբ։ Ո՞չ ապա-քէն զինքը կը սիրես դու ուրեմն պիտի մեռնի . . .

Լէննորա. — Ո՞հ, թող այս օրս ինձի համար վերջինն ըլլայ, բայց փրկէ՛, արձակէ՛ զինքը . . .

Կոմը. — Սյո՛, անոր համար այս օրս վեր-ջին է . . . կորնչի՛ կալանաւորը . . . (կ'ուզի նե-ռանալ, լէննորա նորա նդանցին բռնելով կը կեցունի)։

Լէննորա. — Կո՞մս . . .

Կոմ (ետ հրելով). — Ե՛տ քաշուէ։

Լէննորա. — Շնո՞րհք . . .

Կոմը. — Աշխարհիս վրայ ոչինչ կայ որ

զայն փրկէ . . .

Լէննորա. — Սակայն և այնպէս անոր մէկ գինը կայ . . . այնպէս չէ՞, զայն կը նուիրեմ քեզ։

Կոմ. — Ո՞րն է այդ գին ըսածդ։

Լէննորա. — Ես ինքս եմ, (Տրտմագին աջ ձեռքն անոր կ'երկարէ)։

Կոմ. — Ո՞վ Աստուած, ի՞նչ կ'ըսէ . . .

Լէննորա. — Թող նա ողջ մնայ . . . և ես քուկէ կը մինիմ։

Կոմը. — Դու . . . որ զքեզ կը սիրէ . . .

Լէննորա. — Միայն թէ մէկ վայրկեան մը կարենայ իմ ըսածներս մտիկ ընել, ապա թող ելէ երթայ. այն ատեն սիրոս ալ ետ պիտի առնուի և քեզի կին պիտի լինիմ, կ'երդնում զայս։

Կոմը. — Կ'երդ նուս։

Լէննորա. — Յանուն Աստուածոյ, որ կը տեսնէ զիս և կը լսէ։

Կոմը (կանչելով)։ — Ո՞վ կայ հոն . . . (քան-սակէս մը կը տեսնոի), Կոմը ցած ձայնով հետք կը խօսի. այս միջոցիս Լէննորա մաս-նիին մէջ պարունակող բոյնը կը ծծէ)։

Լէննորա (մեկուսի)։ — Սյո՛, բայց դիակս միայն պիտի առնես . . .

Կոմը (Լէննորայի բով դառնալով)։ — Ողջ պիտի մնայ այն։

Լէննորա (երախտագիտութեամբ այժը երկինք վերցուցած)։ — Ո՞հ, չպիտի մեռնի նա, ո՞վ

Երկնառաք երջանկութիւն . շնորհակալ եմբար-  
եացդ փոխարէն . վերջապէս սիրտս շունչ կ'առ-  
նու . . . ոչ եւս ունիմ մեռելստիպ զարհուրանք ,  
ընդերկար երազած յոյս արդարեւ կատարե-  
ցաւ . ուրեմն ալ երջանիկ կը մեռնիմ . . . և  
պիտի կարենամ ըսել նմա , ես եմ որ քեզ ա-  
ղատեցի :

Կոմսը . — Խօսք մը , բառ մը միայն՝ որ այն-  
չափ տմարդի չըլլայ՝ այլ երկնային սիրոյ ար-  
ձագանգի վանկ մը միայն ըսէ ինձի , ըստ ո-  
րում վերջապէս իմս եղար . ուրեմն պէտք չէ  
այլ եւս խոսութիւն ընես . թող իմ վրայ վե-  
րուցած նայուածքդ աւելի քաղցրիկ հուրէ մը  
ներշնչուի . այս՝ տուր ինձ , մէկ ժպիտիդ մէջ  
այն երկինքն յոր երազեցի : (ինքնին) իմս է նա :

Ակնօրա (մելուսի) . — Ոչ , ալ վախս չմասց ,  
ա՛լ արհաւիրք չեմ զգալ . . . (Բարձր) Մեկնինք ,  
երդմամբ խոստացած եմ (աշտարակ կը մտնին) :



### ՏԵՍԻԼ Պ.

Զնդան . մէկ կողմը երկարէ վանդակով ամ-  
րափակ պատուհան մը , խորը՝ աչ դին դուռ  
մը , կանաչին նուազիոն դյու արձակող կան-  
դեղ մը կախուած է . Ազուցենա խշտեակի մը  
վրայ պառկած եւ Գուսանը նորա բովիկը նրա-  
սած է :

Մանրիկօ . — Մա՛յր , ինչո՞ւ չես քնանար . . .

Ազուչենա . — Այս քարէ կամարներուն տակ  
քունը հրավառ արտեւանունքներէս կը խու-  
սպիէ . ուստի աղօթք կ'ընեմ . . .

Մանրիկօ . — Մ'կ , ցուրտը , թերեւս ծան-  
րացած անդամներդ ընթարմացուց . . .

Ազուչենա . — Ոչ , այդ անիծեալ որմերը ,  
այդ գերեզմանը , ուր կ'զգամ որ կը խոդուիմ ,  
ա՛լ , կ'ուզէի որ դուրս ելեմ ասկէց . ինչու  
որ պիտի ընկճիմ մեռնիմ հոս . . .

Մանրիկօ (յուսահատութեամբ) . — Բայց ի՞նչ-  
պէս փափինք :

Ազուչենա . — Բայց ոչ , ալ չի տիրինք , մար-  
մինս զինքը ճնշող տանջանքներուն կը դի-  
մանայ :

Մանրիկօ (ինքնին) . — Ո՛ ցաւոցս :

Ազուչենա . — Տե՛ս , միթէ մահը իմ ճակտիս  
վրայ իրեն ցուրտ դրոշմը դրա՞ծ է արդեօք ,  
պատասխանէ՛ , ձայնէ՛ առանց երկնչելու :

Մանրիկօ . — Ո՛վ երկինք :

Ազուշէնա . — Ուստի , իւր պատանքին մէջ համր և սառած դիակ մը միայն պիտի անցնի ձեռուընին :

Մանրիկօ . — Մա՛յր իմ . . .

Ազուշէնա . — Ականջ դի՛ր , մարդ կուգայ . . . ա՛հ , դահճներն են , զիս դէպի խարոյկ պիտի քաշքան տանին . . . զաւակս , պաշտպանէ՛ պահպանէ՛ քու մայրդ . . .

Մանրիկօ . — Ոչ ոք կուգայ . . . այս զնդաները լուռ ու մանջ են . . . ոչի՛նչ . . . ամէն բան խորհրդաւոր լուռ թեան մէջ է . . .

Ազուշէնա (սարսափելով) . — Խարո՛յկ . . . խարոյկ . . . ո՛հ , ի՛նչ ահոելի , ահարկու բան : Գիտե՞ս թէ : օր մը բարբարոս խուժանը քու մամդ քշեցին դէպի խարոյկ տարին . ա՛խ , նայէ՛ , նայէ՛ . . . միմիայն բոցը կը փայլի այս խաւար բնակարանին մէջը . . . տե՛ս . . . այն տարբարադդ զոհը . . . բոցերուն մատնեցին . . . ամբողջ մարմինը սպառեցաւ . . . մոխի՛ր դարձաւ . . . մեռաւ խեղզը . . . ո՛հ , զարհուրելի բան . . . ա՛հ , սա ահարկու տեսարանը հեռացո՞ւր աչքերէս . . .

Մանրիկօ . — Ա՛հ , գորովասէր զաւկիդ խօսքը թող ազգէ հոգւոյդ և քեզ միմիթարէ . վերջապէս զսպէ սոսկումդ և խաղաղութեամր քնացի՛ր , հանգչէ սրտիս քրայ , մա՛յր իմ : (Գրկելով իշտեակին վրայ կը տանի զայն) :

Ազուշէնա (գրեթէ մրափելով) . — Ո՛վ սիրեցեալ բնակալայրդ իմ Սպանիա . զաւակս զիս

մեր լեռները կը տանի , և իւր ջնարով սիրերդ կը նուագէ երգելով օրուան ծագումն ու սէրը : Ես ալ նորա քովիկը կը նիրհեմ անդորր ու խաղաղիկ . . .

Մանրիկօ . — Եկո՞ւ մայրիկս , քնացի՛ր իմ մօտ , ես ալ աղօթելով կը հսկեմ վրադ :

(Ազուշէնա կը պառկի , Մանրիկօ անոր յնվիկը ծերադրած կ'աղօթէ) :

### ՏԵՍԻԼ Պ.

Առջինները . դուռը կը բացուի , Լեռնորա կը մտնէ , ետք կոմար եւ նորա կը հետեւին զինեալ զօրքեր :

Մանրիկօ (Լեռնորան տեսնելով) . — Ի՞նչ կը տեսնեմ , այս մթնշաղը զիս կը խարե՞ն արդեօք . . . կ'երազե՞մ դեռ . . .

Լեռնորա . — Մանրիկօ , ես ինքս եմ . ե՞ս եմ : Քու լէոնորադ , քու գի՛րկդ է :

Մանրիկօ . — Լէոնորաս իմ գի՛րկս է , ուրեմն Սատուած գթաց յիս , որ այս իմ վերջին և գերագոյն ժամուս քեզ ինծի կը պարգեւէ ի վերջին տեսութեան . Աստուած , փա՛ռք քեզ :

Լեռնորա . — Սակայն դու չպիտի մեռնիս , աղատ ու ողջ պիտի մնաս :

Մանրիկօ . — Ե՞ս , պիտի ապրիմ . . .  
 Լէննորա . — Ազատեցի քեզ . . . օ՛ն , փու-  
 թա՛ . . . չո՛ւտ ըրէ , ե՛լ , գնա՛ : Հեռացի՛ր այս  
 տեղէն : (Մատով դուռը կը ցուցնէ) :

Մանրիկօ . — Իսկ դո՞ւն : Հետո չպի՞տի գառ :  
 Լէննորա . — Ո՛չ , ես պէտք չէ որ փախչիմ :  
 Մանրիկօ . — Ինչո՞ւ համար :

Լէննորա . — Ո՛չ , հեռացի՛ր կ'ըսեմ :

Մանրիկօ . — Առա՞նց քեզի , բնաւ :

Լէննորա . — Երկաթներդ , շղթաներդ , կը  
 կոտրտեմ զանոնք :

Մանրիկօ . — Երբէ՛ք , երբէ՛ք :

Լէննորա . — Մի՛ յապաղեր , ապա թէ ոչ  
 կեանքդ :

Մանրիկօ . — Կ'արհամարհեմ զայն . . . բայց  
 նայիմ աչքերուդ մէջը , մէկ խօսք մը միայն  
 ինձ ըսէ տեսնեմ . . . այդ իմ կեանքս . . . ի՞նչ  
 գինով արդեօք կը բերես ինձ : Բոէ՛ : Կը պա-  
 ղատիմ : Ա՛հ , սատակիչ սրամութեամբ հաս-  
 կրցայ իրողութիւնը . . . Հակառակո՞րդս . . . ո՛հ ,  
 ուխտադրո՞ւժ կին . . . սէրս , խոստումդ , եր-  
 դումդ վաճառեցի՞ր ուրեմն :

Լէննորա . — Փախի՛ր :

Մանրիկօ . — Ա՛հ , վատանունը ծախեց իմ  
 սէրս , ուստի այդ քստմնելի եղեռանդ համար  
 կը նզովեմ քեզ :

Լէննորա . — Ով օր ծախորդութեանց . եթէ  
 գիտնայիր թէ որպիսի անձկութեան տակ կը  
 հեծեմ , բայց Սստուծոյ քեզի պարգեւած այս

յուսոյն համար , ատեն չկայ . . . մա՛կը կեցած է  
 դէմդ . . . ժամէ մը ամէն բան կը կորնչի . . .  
 (Մանրիկօյի ոսքը լնելնելով) :

Մանրիկօ . — Ե՞ս քաշուէ :

Լէննորա . — Ինչո՞ւ զիս կը մերժես . . . չը-  
 նո՛րհք , չե՞ս տեսներ թէ որչա՞փ կը տանջուիմ ,  
 ո՛հ . . . նայէ . . . հոգիս կ'աւանդեմ . . .

Մանրիկօ . — Ի բա՛ց գնաւ : Կ'ասեմ քեզ :

Անիծեա՛լ լինիս :

Լէննորա . — Ի՞նչ մահացու բառ է այդ ը-  
 սածդ . . . պէտք է ինձի համար , հոգւոյս հա-  
 մար աղօթք ընես . . . ըստ որում հիմա հոգիս  
 պիտի աւանդեմ Տիրոջը . . .

Մանրիկօ . — Ա՛հ , կը զարհուրիմ . . . արի՛ւնս  
 կը սառի . . .

Լէննորա . — Եղո՞ւկ , Մանրիկօ . . . (ընդա-  
 ռաջ կը վազէ եւ կ'իյնայ) :

Մանրիկօ (զինքը վերցունելով) . — Բոէ՛ , ի՞նչ  
 եղար , ի՞նչ ըրիր , չո՞ւտ , խօսէ . . .

Լէննորա . — Մահը սրտիս մէջն է :

Մանրիկօ . — Մա՞հը :

Լէննորա . — Աւա՛զ , այս' . . . զոր ձեռօքս  
 առի . . . և այս թոյն աւելի ուշ պիտի ազգէր  
 բայց կարծածէս աւելի զօրաւոր է եղե՛ր . . .

Մանրիկօ . — Ով երկինք , Լէննորա . . . որ-  
 պիսի շանթեր ինկան գլխուս . . . եղո՞ւկ ինձ :

Լէննորա . — Բանէ՛ ձեռօքս , տե՛ս սառեր  
 է . . . բայց . . . ներսէս սարսափելի կրակ մը կը  
 լափէ զիս . . .

Մանրիկօ . — Ի՞նչ ըրիր Լէոնորաս . . . Աստուած իմ , համի՛ր ինձ :

Լէոնորա . — Քեզ մատնելով ողջ մնալքս լաւագոյն էր . . . որ անարա՞տ ըլլամ և մեռնիմ . . .

Մանրիկօ . — Ի՞նչ է այս լսածս , դու ինձի համար կը մեռնիս , սիրուն հրեշտակս , և ես անողորմաբար նզովեցի քեզ , վայ տխմարիս :

Լէոնորա . — Կրակը զիս կ'այրէ , ա՛հ . . . ահոելի՛ տանջանք . . . կը մեռնիմ . . .

Մանրիկօ . — Վայ ինձ , անէ՛ծք գլխուս . . .

Լէոնորա . — Ներէ՛ , Աստուած իմ , եթէ սէրս մեղք համարիս :

## ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ , ԿՈՄՍԸ , ԶԻՆԱԿԻՐՆԵՐ

Կոմսը (Լէոնորան մահամերձ տեսնելով) . — Ա՛հ . . .

Լէոնորա . — Ես ի՞նչպէս մատնէի քեզ . . . զոր կը սիրէի . . . լսւագոյն էր յաւէտ կորսնցունել քեզ . . . ուրեմն , առ յաւէտ . . . (Հոգին կ'աւանդի) :

Գուսանը . — Ո՛ ազնիւ ւիրտ , դու ինձի համար կը մեռնիս , իսկ ես հայհոյեցի քեզ , ես որ կը սիրէի զքեզ , յաւէտ ե՛րթ բարեաւ :

Կոմսը (իմքնին) . — Ա՛հ , նենդաւորն զոր սիրեցի , առ յաւէտ կորսնցուցի . . . (զինուորներուն ցոյց տալով Պուսանը) , դատակնիքը թո՛ղ ի գործ դրուի . . .

Մանրիկօ (զօրքերը տանելով) . — Մնա՛ս բարեա՛ւ , մա՛յր , մնաս բարեա՛ւ : (Մեռելոց երգ դրսէն) :

Ազուշէնա (տակաւ արթնելալով) . — Ո՛վ երկինք . այս մեռելոց ե՛րգը . . . բայց ի՞նչ է այս . . . մինա՞կ իմ մնացեր հոս . . . զաւակս , ո՞ւր տարին , Տէր Աստուած :

Մանրիկօ (դրսէն) . — Մա՛յր , օրհնեա՛լ ըլլաս մարտիրոսութեանդ ժամուն , ո՛վ Լէոնորադ իմ քնքուշ , եղուկ , ահա քեզ կը հետեւիմ երկի՞նքը :

Ազուշէնա (Կոմսը տեսնելով ձիչ մը կ'արձակէ) . — Զաւակս պիտի սպաննեն , գթութիւն ինձի համար , անգութիւնողորմ :

Կոմսը . — Մեռնելու տարին , կացինը պատրաստ է . . . այս՝ , վրէժինդրութիւնս պէտք է յագենայ :

Ազուշէնա . — Կեցուր . . . սպասէ՛ . . . ինձ մտիկ ըրէ . . . (հարուածի ձայն , Ազուշէնա իւնյելեղ) ա՛հ . . .

Կոմսը . — Դուրսը նայէ , տե՛ս :

(Այս միջոցին բատրնելին խորը բացուելով ուխտաւորներով շրջապատեալ մահաբեմը կը տեսնուի : Դահիճը կացինին կորին կորսած կը կենայ : Կառափնասին մօս կարմիր շար մը զո-

հին մարմնոյն վրայ ձգուած է) :

Ազուշէնա . — Մեռա՛ւ . . . (կատաղի հեղմուրեամբ) Այդպէ՞ս է ուրեմն . . . գիտցիր որ նաքու եղբայրդ էր . . .

Կոմսը . — Եղբայրս . . . ափսո՞ս . . .

Ազուշէնա . — Այս' , ահա Աստուած մօրս վրէժը լուծեց . . . (կ'իյնայ կը մեռնի) :

Կոմսը (սարսափահար) . — Ո՛վ սոսկմանս . . .  
(Վարագոյր կ'իջնէ) :

## ԶԵԿՈՅՑ

— ♀ —

Գրեոյկիս կեդրոնատեղին է՝ Պաղչէ-Գառ-  
բու թիւ 50 Յակոբ Ալամալեանի գրասունը.  
ուր կը գտնուի նաև դպրոցական, կրօ-  
նուկան, պատմական, բանեական գրեւէ  
զաւ հետեւեալներն ալ.

ԴՐ.

1. Գաղտնիք եւ արուեստ մողութեան	15
2. Երկարագործն. 2 հատու	15
3. Լաների գրգ. 2 հատու	20
4. Փարիզ սելսալերի. 3 հատու	25
5. Լա մօլինառ կամ չաղացզանին աղջիկը	7
6. Միլուան	5
7. Գարուն եւ աշուն	3
8. Ճղնաւոր	1
9. Երանոս աղպար. (կատակերգութիւն)	1

Գիւ 2 դահեկան

ՀՀ Ազգային գրադարան



NL0341651

